# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-31/2024/ՊԾ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**Ք. Երևան**

**«30» «05» 2024թ.**
**ժամը՝ 12:00**

**ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝**

Ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ պարեկային ծառայության կազմակերպման վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Դ. Հակոբյան (հանձնաժողովի նախագահ),
Բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ պարեկային ծառայության կազմակերպման վարչության պարեկային ծառայության կազմակերպման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա. Սարգսյան (գնահատող անդամ),
Գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՊԾ մոնիթորինգի և քրեաբանական վերլուծության վարչության քրեաբանական վերլուծության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սայադյան (գնահատող անդամ),
Դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության տնտեսական բաժանմունքի առաջատար մասնագետ Հ. Համբարձումյան (բացող անդամ),
Ե. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության տնտեսական բաժանմունքի ճարտարագետ Ս. Մանուկյան (բացող անդամ),
Զ. Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

## ՕՐԱԿԱՐԳ

1. **ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԾՐԱՐՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.**

Հայտ ներկայացրած մասնակից՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացրած հայտը կազմված չէ հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից բացակայում են հրավերով պահանջվող չափաբաժին 1-ի և չափաբաժին 2-ի գնային առաջարկին կից միավոր գների ծավալաթերթերը:**

2. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

**ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-31/2024/ՊԾ** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ /1/ աշխատանքային օրով և **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ**-ին առաջարկել կատարել վերը նշված անհամապատասխանությունների շտկումները:

3. **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված 1 աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը,այն է 03.06.2024 թվականին, ժամը 14:00-ին՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 ;

**ՆԱԽԱԳԱՀ՝**

Դ. Հակոբյան

**ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Ա. Սարգսյան

Ա. Սայադյան _____

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. Աբասյան _____